



ՄԱՐԹԱՐԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36 ՐԴ ՏԱՐԻ

ՄԱՐԹ 29 ՕԳՈՍՏՈՍ 1887

ԹԻԻ 3887

ՄԱՐԹԱՐԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐՍԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագները դրկելու է առ մատակարարութիւն Սրեկելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Աղդային Տեսութիւն. Եկեղեցականաց անտարբերութիւնը. Պաշտօնի հայ տրեստաւորի մը դիտողութիւնները. (Պ. Յ. ԿԻՒՄԻԻՇԵԱՆ) Ուղեւորութիւն ի Կիւիլիա. Մեկնումն Ատանայէ. Սիւ, Սոյ հոյ մենաստան, իւր գանձարանն, Ձէյթուն եւ Հաճըն. (Վ. ԼԱՆԿԼՕՍ. Թարգմ. ՄԻՐ. Յ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ) Պաշտօնի եւ Կ. Պոլիս. վարդան, Արշաւիր եւ ինն Արծրունի հայկազն կայսերը Բիւզանդիոյ. (Պ. Տ) Վէպ. Հայաստանի բարքեր. Սիւսկ եւ Սոսուն, Բընուլեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱՅՍԵՆԱՆ) Քաղաքացիական Լրոց. Արտաքին, Ներքին, Աղդային.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 28 ՕԳՈՍՏՈՍ

ԱՂԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒՆ ԱՆՏԱՐԵՐԵՐԹԻՒՆԸ

Գեր. Օրմանեան Սրբազան, Վեհ. Մալար Կաթողիկոսին հրամանաւ եւ Պատրիարքարանի թոյլտուութեամբ Գեղարքեան ճեմարանի մէջ աստուածաբանութեան ուսուցիչ կարգուելով, հրաժարեցաւ Կարնոյ առաջնորդութենէն եւ շաբթուս մէջ մայրաքաղաքէն մեկնեցաւ ի Ս. Էջմիածին:

Որովհետեւ Կարնոյ նման հայաշատ եւ կարեւոր վայր մը չէր կրնար անհովիւ մնալ, Վարչութեան Խառն Ժողովն առաջնորդական ընտրելեաց եռապատիկ ցանկ մը զրկեց անդ, որպէս զի Գաւառական Ժողովն ընդօրոյթ գումարուելով ընտրէ իւր Առաջնորդն: Այդ ցանկ կը պարունակէր Գեր. Նար-Պէյ եւ Դիմաքսեան եպիսկոպոսաց եւ Արժ. Արսլանեան Ներսէս վարդապետի անունները:

Դիմաքսեան Սրբազան հրաժարած է առարկելով իւր վատաւողութիւնն

եւ Նար-Պէյ Սրբազան հրաժարած է ծանուցանելով թէ ինք Ռումանիոյ առաջնորդ ընտրուած լինելով բանակցութեան մէջ է այս մասին Ռումանաբնակ Հայոց հետ:

Յետոյ կը հաստատենք թէ մեր եկեղեցականք հետզհետէ կը դժկամակին Գաւառական պաշտօններ ընդունելու եւ այս մեր ցան աշխարհ մեծ է որչափ կը տեսնենք որ ժողովուրդն անխնամ եւ անհովիւ մնալով կը կարծէ իւր ցաւոց դարման գտնել կրօնափոխութեանց դիմելով:

Մեր աշխարհականքս կը յուզուինք լսելով այս ինչ կամ այն ինչ գաւառի մէջ տեսնուած կրօնափոխական շարժումները, լրագրք իբր արձագանք հասաւակաց կարծեաց չեն դադրիր կոչում ընելու եկեղեցականաց ազգափրութեան եւ եկեղեցափրութեան, այլ նոքա անտարբեր եւ խուլ կը մնան այս հրաւիրանաց եւ կը շարունակեն դեգերիլ Վոսիփորի ափանց վրայ:

Հետաքրքիր եղանք խմանալու թէ ի՞նչ են այն պատճառներն որք տեղի կուտան այս անտարբերութեան. մեղ տրուած պատճառաբանութեանց մէջ եթէ կայ սակաւ ինչ լուրջ վատ մը, այն ալ սոք է թէ առաջնորդութիւնը անկարող են առաջնորդի ծախսերն հոգալու:

Թէեւ մենք եկեղեցականութեան պաշտօնին վրայ բարձր գաղափար մը ունինք եւ անտեղի կը գտնենք այսպիսի պատճառաբանութիւններ, վասն զի եկեղեցական մը ամէն բանէ առաջ պէտք է անձնուէր եւ եկեղեցասէր լինի, բայց որովհետեւ մեր առաջնորդք եկեղեցական պաշտօնին հետ կը միացնեն աշխարհական հանգամանք մը, որով պարտին ունենալ իրենց պաշտօնին վայել դիրք մը, ուստի մասամբ արդարանալի կը գտնենք դրամական տեսակէտով իրենց ըրած պահանջումն եւ արժանի խորհրդածութեան:

Կարին, մեր առաջնորդութեանց մէջ ամենակարեւորն է թէ իւր ընդարձակութեամբ եւ թէ իւր հայաշատութեամբ, եւ միանգամայն կարող է առաջնորդ մը պահել լաւագոյն պայմաններու մէջ. հրաժարիլ այսպիսի առաջնորդութենէ մը կը նշանակէ թէ մեր եկեղեցականք հեռի են անկեղծ լինելէ իրենց պատճառաբանութեանց մէջ:

Մեր Պատրիարք եւ Վարչութիւնները, մեր եկեղեցականութիւնն եւ

մեր երեսփոխանութիւնը, միով բանիւ մեր գործիչ մարմինները մինչեւ ցարդ պէտք եղած կարեւորութեամբ չեն քննած եւ ուսումնասիրած առաջնորդական խնդիրն:

Ասկէ մի քանի տարի առաջ յատուկ յանձնաժողով մը կարգուեցաւ որոյ պաշտօնն էր առաջնորդութեանց կազմակերպութիւնը. չենք գիտեր թէ ո՞ր է եւ ի՞նչ կը գործէ այս յանձնաժողովը: Փափաքելէ էր մեզ համար տեսնել այդ յանձնաժողովոյ քննութեանց արդիւնքն: Եթէ մինչեւ ցարդ այդ յանձնաժողով գործ մը չէ տեսած Վարչութեան անկ է նոր յանձնաժողով մը կազմել պաշտօն տալով նմա Վ. դասակարգել ճշդել եւ ընդարձակել մեր առաջնորդական վիճակաց սահմանները: 2. լսել եկեղեցականաց գանդատներն եւ փաստերն որք կը հարկադրեն զիրենք պաշտօնէ խոյս տալու եւ 3. առաջարկել գործնական միջոցներ այս նկատմամբ:

Եթէ միւս կողմանէ սահմանենք այն ժամանակամիջոցն եւ այն պաշտօններն զորս եկեղեցական մը պարտաւոր է վարելու, որպէս զի կարող լինի եկեղեցական ամենաբարձր պաշտօններու հասնիլ, այն ատեն միայն կրնանք աւելի խիստ վարուիլ անտարբեր եւ պարտազանց եկեղեցականաց նկատմամբ:

Աղդային վիճակին դիտակցութիւն ունեցող ամէն ոք պիտի խոստովանի մեզ հետ թէ մեզ համար ամենահրաժեշտ պէտք մ'է առաջնորդական վիճակաց կազմակերպութիւնն. ուստի, կը յուսանք որ նոր ընտրելի Վարչութիւնն իւր առաջին ուշադրութեան առարկայ պիտի ընէ այս խնդիրն եւ այսու Աղդին մատուցած պիտի լինի ամենամեծ ծառայութիւն մը:

Աւելի մեծ ուշադրութիւն դարձնել գաւառական գործոց վրայ, եւ կարգապահութիւն մտցնել եկեղեցականութեան մէջ, ապոնք են ըստ մեզ դատարարականութեան խնդրոյն հետ Հայոց Աղդն ներքնապէս զօրացնելու եւ բարձրացնելու միջոցներն: Ասոնց առջեւ ուրիշ խնդիրներ երկրորդական կարեւորութիւն ունին:

ՊՈԼՍԵՑԻ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՌՈՐԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սերով կը հրատարակենք հետեւեալ յօդուածն, զոր գրած է հայ արհեստաւոր մը: Կը փափաքէինք որ իւրաքանչիւր արհեստաւոր իւր արհեստի մասին այսպէս տեղեկութիւններ հաղորդէր հրատարակաւ:

Մասի 3884 թուոյն մէջ հետաքրքրութեամբ կարդացի «Արհեստը և արհեստաւորը» վերնագրով յօդուածն, որ մասնաւորապէս Կ. Պոլսոյ հայ արհեստաւորին վիճակը կը ներկայացնէր:

Հեռի գրադէտ կամ հրապարակագիր լինելէ, Պոլսեցի մի հայ արհեստաւորս, յենով երկարամեայ փորձառութեանս վերայ, այս մասին իմ գաղափարն արտայայտելու համարձակութիւնն ունեցայ: Թէեւ արդոյ յօդուածագիրը ճանաչելու պատիւը չունիմ եւ չեմ գիտեր թէ երբէք արհեստաւոր եղած է, այլ իւր գաղափարներն իր լիովին ճշմարտութիւններ չեն: Ներկայ ժամանակին մէջ Կ. Պոլսոյ հայ արհեստաւորն Եւրոպոյ մէջ արհեստից զարգացումն անտարբեր աչօք չդիտեր ինչպէս յանցելուն, եւ գտնուած ասպարէզին մէջ գնահատելի յառաջդիմութիւններ ըրած է: Եթէ հայ արհեստաւորն ի սկզբանէ անտի մեռելական անշարժութեան մէջ եղած լինէր, Կ. Պոլսոյ օտարագրի արհեստաւորաց պարագլուխը չէր կրնար լինել: Հայ արհեստաւորն ունի ուրեմն կորով եւ հաստատամտութիւն, հետեւաբար գէոօ չէ: Փաշով գերման, ֆրանսացի, անգլիացի եւ ամերիկացի արհեստաւորաց հետ հայ արհեստաւորին բաղդատութեան, այս վերջինն ոչ միայն անոնց կրնայ հաւասարիլ մի եւ նոյն պայմանաց մէջ, այլ զանոնք կը գերազանցէ իսկ:

Եւրոպոյ քաղաքակրթութեան արտադրութիւնները մեր երկրի սեմէն ներս ամենայն դիւրութեամբ խոծելէն ի վեր, հայ արհեստաւորին ոտքն ու ձեռքը կաշկանդեցաւ եւ այս կապերն ինք անկարող է լուծել: Հայ արհեստաւորն երբ լոյս տեսնայ, չկուրանար, այլ եւրոպացի արհեստաւորին այն լոյսին մէջ չնշմարածն ինք յստակ կը տեսնէ: Ապացոյցներ չեն պակսիր յայտմ. ի մէջ այլոց յիշեմ աստանօր իմ բարեկամ Պոլսեցի հայ արհեստաւորի մը պատասխանն, երբ մի քանի տարի առաջ մասնաւոր գործով մը Թրանսայի Լիօն քաղաքը կը գտնուէր: Թեղացի արհեստաւորներն հարցուցին այս ֆէսաւոր տարօրինակ մարդուն թէ ինչպէս կը գտնէ իրենց երկրին իրերն եւ մարդիկը: «Բաւական տըխմար կը տեսնեմ ձեզ» կը պատասխանէ: «Ապացոյցն այն է որ դուք աստ ամեն դիւրութիւն ունիք գործելու եւ հարստանալու եւ դարձեալ դժգոհ էք: Սինչ մենք այս հրաշալի դիւրութեանց գաղափարն անգամ չունիմք մեր երկրին մէջ. ես հայ արհեստաւորս որ ոչ ձեր լեզուն գիտեմ եւ ոչ դպրոցի երես տեսած ունիմ, հոս եկայ միայն 600 ֆրանք դրամագլխով եւ այս լոռաւորութեան կեդրոնին մէջ ձեր չտեսածը տեսնելով նոր գործ մը գտայ եւ բաւական հարստացայ»:

Մեր վերջին դարման մեր կարողութեանէն վեր է: Այս խնդիրն երկրին կենսական խնդիրներէն մին է, զոր միայն ժամանակը կարող պիտի լինի լուծել: Ունեցանք Եւրոպոյ կամ Ամերիկայի մէջ ուս-

եալ մասնագէտ արհեստաւորներ, որք առ ի չգոյէ կանոնաւոր ապրուստի անկարող եղան աստ հաստատութիւն և ստիպուեցան վերադառնալ այն օտար երկրներն ուր կայ ընդարձակ ասպարէզ իւրեանց ճարտարագործութիւնն ի կիր արկանելու:

Երբ քաղաքի մը մէջ կան 100 արհեստաւորներ եւ 10ը միայն կարող են գործ գտնել, այն ալ միմեանց ձեռքէ յափշտակելով, եթէ գիտցողը չգիտցողին սովորեցնէր, զբաղի եւ վարպետներու թիւը բազմանայ, արհեստաւորաց առաւել ստուար մէկ մասն ենթակայ պիտի լինի թշուառութեան: Ուրախաւ թէ որ մեր այս յետնեալ վիճակին մէջ անգամ արհեստական և ճարտարագործական ձեռնարկներուն մեծ մասն Հայոց ձեռքը լինելը կը հաստատենք: Պ. յօդուածագիրը վստահ լինի ուրեմն թէ բարեկարգութիւնն և քաղաքակրթութիւնը միայն պիտի բարւոքէ հայ արհեստաւորին վիճակն եւ նոր մղում մը պիտի տայ իւր ձիրքերուն:

Նոր սերնդեան վերաբերմամբ Պ. յօդուածագիրն կրթական տեսութեանց համով եմ, այլ մեր վարժարանաց տեղական պիտոյից համեմատ ուղղութիւն տալը մեծ մարդու գործ է, եւ մեր մէջ մեծ մարդիկ կը պակսին:

Պէտք չէ երբէք երկնչիլ զի մի գուցէ հայ արհեստաւորն եւրոպացի կամ ամերիկացիներէ մարտի: Հայն անոնցմէ աւելի կը գիմանայ աշխատութեան, անօթութեան եւ ամեն զրկանաց, եւ է աւելի ճարտար, տոկուն եւ սակաւագէտ: Բաւեր հաւասար կարողութեան տէր երկու գործաւոր, մին հայ, միւսն եւրոպացի. տուէք մի եւ նոյն գործն երկուքին ալ եւ պիտի տեսնէք որ հայուն շինածն աւելի աժան և հաստատուն է:

Հայ արհեստաւորին յառաջդիմելու համար միայն ասպարէզ պէտք է, գործ պէտք է: Կարա՞յ է: Թէեւ անօթի մնացած գործաւոր չկայ, բայց սա ոչ միայն իւր անձն ալ ընտանիք մ'ալ ունի սնուցանելու եւ իւր աշխատութեան ճարտարութեան համեմատ չէ կարող ապրուստ գտնել այն արհեստներուն մէջ ուր ասպարէզ կայ, ինչպէս բժշկութիւն, փաստաբանութիւն յորս բաւական յառաջ գացած են հայերն, եւ այսօր կարեւոր դիրք մը կը գրաւեն: Կըրնաք վստահ ըլլալ ուրեմն ուրիշ որ եւ է ճիշդի մէջ որ կարենայ իւր բովանդակ գիտութիւնը գործածելու առիթն ունենալ, եւ ըստ այնմ հաւասար պտուղ քաղել, դարձեալ առաջնակարգ կացութիւն մը պիտի ձեռք բերէ:

Հայ արհեստաւորին հեղինակելու, բարձրանալու, հոշակ հանելու ինչ միջոցներ տուած ենք, որ անոր համեմատ արդիւնք ակնկալենք: Ո՞ր են արուեստահանդէսները, գիշերային ձրի արհեստաւորաց դասարաններն, յետին արհեստի համար մասնաւոր դիրքերն, արհեստական լրագիրները, թանգարաններն եւ քաղաքակրթեան համար միջանակներն ևն. ևն. որոնց ամենքն ալ կը վայելէ Եւրոպացի արհեստաւորն:

Ահա մի ուրիշ օրինակ Պոլսեցի հայ արհեստաւորին կարողութիւնն եւ յանդգնութիւնն ասպացուցանող իմ ծանօթ արհեստաւորներէ մին, կ'ըզուշանամ անուանել ի յարգանս իւր համեստութեան, առանց Եւրոպա գացած լինելու միայն ինքնօշնութեամբ սովորած իւր արհեստն, երբ ձընտըղլի բարձանց վրայ գերմանական

պալատը կը կառուցուէր, տեսաւ որ իւր արհեստը կը գործեն, գերմանացի եւ իտալացի գործաւորներ, դիմեց իսկոյն չէնքին առաջնակարգ գերմանացի ճարտարապետին եւ առաջարկեց որ իրեն յանձնուին այն գործերը: Գերմանացին ծիծաղեցաւ. «Դու ի՞նչ ազգ ես» ըսաւ: «Հայ եմ»: Կառավարանեց բարեկամս: «Այս արհեստն իտալացիներու սեփական է, ինչպէս Գերմանիոյ մէջ ալ անոնք առաջին են, այս ճիւղին մէջ անոնց շինածն ամենէն ընտիրն է»: Հայը պատասխանեց. «Շատ լաւ, միայն խնդրեմ, դուք որ արհեստից հետաքրքրէք եւ հասկցող, աչքէ անցուցէք իմ օրինակներս»: Վերջապէս գերմանացին քննեց այս գործերն եւ հիացաւ, կասկածեցաւ հայու մը ձեռագործը լինելուն, բաղդատելով զայնս իտալացեաց շինածին, գործին գերազանցութիւնն հասկցաւ եւ ըստիպուեցաւ հայուն շինել տալ, պահանջելով աւանդ որդեալ գումար մը, զոր պիտի տուէր երբ շինութիւնն օրինակին յար եւ նմանը չ'ըլլար: Հայը վստահ իւր հմտութեան վրայ, չվարանեցաւ, պէտք եղած գումարն հայթայթեց եւ պայմանադրութիւն մը կնքուեցաւ: Երբեք գերմանացիներ կը հսկէին իւր գործին, եւ մանրացող կը զննէին: Վերջապէս հայն անոնց սպառնալով ընտիր գործ շինելով հաւանցուց եւ գոհունակութեան վկայագիր մ'ալ առաւ: Նա որ կը կասկածի եղելութեանս ստուգութեան, խնդրեմ թող հաճի երթալ պտոյտ մ'ընել Բերայի գերմանական պալատն եւ զննել մէջի թափու մարմարինէ որմերն: Եւ ահա այս արհեստաւորը 23 երկար տարիներ իւր արհեստով զբաղելով զայն կատարեալ գործելէն զինի, այսօր գործ չգտնելուն, յոյսը կ'ընթացնէր լոյս տարբեր արհեստի մը կը հետեւի:

Քանի՜ արհեստաւորներ գիտեմ որք մրցման այս անհատասար կացութեան միջեւ կ'աշխատին խեղճերը կոտորած գործիքներով, առանց դրամագլխի, Եւրոպոյ գիւրաբեկ ասլանաց մակնթացութեան գէթ մաքսուելու, եւ դեռ վաճառականը լսել կը գտնէ անոնց տպրանքը վաճառելով:

Ի վերջ բանի հայ արհեստաւորն այն ձիրքերով եւ ընդունակութեամբ որոնցով օժտուած է, կարող է ինքնօգնութեամբ յառաջանալ եւ զարգանալ, հերիք է որ յառաջդիմութեան կողքին անիւններուն առջեւ քարեր չգրուին, եւ լայն ուղիներ բացուին:

Մի հայ արհեստաւոր
Պ. Յ. ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի Կ Ի Լ Ի Կ Ի Ա

ՄԵԿՆՈՒՄՆ ԱՏԱՆԱՅԷ.—ՄԻՍ.—ՍՈՍ ՀԱՅ ՄԵՆԱՍԱՆՆ.—ԻՒՐ ԳԱՆՁԱՏՈՒՆԸ.—ԶԷՑՈՒՆ ԵՒ ՀԱՃԸՆ

Դեկտեմբեր 20ին (1885), առաւօտուն կանուխ, կարաւանը ճամբայ ելաւ ցերեկուան տաքէն ազատելու համար, որ դեպ տեմբերի վերջերն երբեմն անտանելի կ'ըլլայ Ատանան Տօրոսէն անջատող ընդարձակ դաշտին մէջ:

Պիտի անցնէինք այն թիւրքմէններուն եւ Եւրիւքներուն բնակավայրերէն. որք եւ ձմեռուան մօտերն, լեռներէն կ'իջնեն, Ատանայի Չուքուր-Օվա ըսուած գաւառին մէջ:

ընտանեկան համար։ Երեկոյին եկանք օթե-
ւանիլ Սարգսնտըլը-Օլլուներուն քով, որոց
ցեղապետն, Արսլան աղա, զմեզ հիւրընկա-
լեց։

Երբ քիչ մը հանգիստ առինք եւ մեր
ուղին շարունակելու համար մեզ անհրա-
ժեշտ եղող պաշարները գնեցինք, Արսլան
աղա մեզ ընկերացաւ մինչեւ Գարա-Գաճը-
լներուն ցեղապետին քով, որոց վրանները
կը կանգնէին մեր ի Սիւ, զոր կը փափա-
գէի այցել։ Մուրազա պէյ իւր որդւոյն
յանձնած լինելով մեր կարաւանին առաջ-
նորդութիւնն, հրամայեցի հետեւորդացս
մէկ մասին որ ինձ սպասեն Թուրքմէն տ-
ղային քով, Սոյ հայ կաթողիկոսական վան-
քին մէջ զօրութեան աւելորդ ցոյցերով չը
մտնելու համար։ Որոշուեցաւ որ միայն Մէ-
հմէտ պէյ, Մուրազա պէյին որդին, եւ
երկու ձիւներն ընկերանային ինձ, վաճառ-
քով համար։ Հայ կաթողիկոսին համար
յանձնարարական նամակներ ունէի. բայց
յետոյ տեղեկացայ թէ լաւագոյն յանձնա-
րարութիւնն զոր ունէի, Մուրազա պէյին
իւր որդւոյն տուած հրամանն էր որ ինձ
աղէկ նայիլ տայ վաճառքին մէջ եւ կաթողի-
կոսէն հաճութիւն ստանայ որ ինձ ցոյց
տրուին մատենադարանն եւ եկեղեցւոյն
դանձառուներ։

Մուրազա պէյին Տօրոսի ստորտն ի-
րեն համար շինել տուած տունէն երեք
ժամ հեռու, ոտքով անցանք փոքր գետա-
կէ մը, եւ, իւր ընթացքն ի վեր երկելով
դէպ արեւելք, շուտով հասանք այն ժայ-
ռերուն որոց վրայ կը բարձրանան Սիւ քա-
ղաքին տուններն։ Այդ խեղճ գիւղաքաղաքը
միջին դարուն մէջ մայրաքաղաքն էր Կիլի-
կիոյ հայ թագաւորաց, որք հոն եկեղեցի-
ներ շինած եւ բերդեր ու պալատներ
կանգնած էին։

Սոյ տուններն հարթ տանիքով են, այլ
տանիքներն այն ձեւով յարկեալ են որ մէկ
կարգ տանց տանիքները վերեւի կարգին
համար փողոցի տեղ կը ծառայեն։ Հայ
վանքը կառուցուած է դէպ ի հիւսիս եւ
քաղաքին գագաթն։ Ամեն տեսակ շինու-
թեանց հաւաքում մ'է, առանց համեմա-
տութեան եւ խառն ի խառն դիպած։
Դղեակը Սոյ գագաթը կը պսակէ։

Երբ մեր գալուստը լուեցաւ, վաճառքին
աստիճանաւորներէն մին զմեզ դիմաւորե-
լու եկաւ, եւ ինչան հպատակութեան ինձ
ընկերացող երիտասարդ պէյին սուպան-
դակն համբուրելէ յետոյ, անոր ձիւն
անձէն բռնեց եւ բազմաթիւ օճապոտոտ
փողոցիկներու մէջէն զմեզ տարաւ մինչեւ
այն ցած դռուն ուստից կը մտնուի վան-
քին ներքնակողմը։

Կաթողիկոսը ճաշ մը պատրաստել տը-
ւած էր մեզ համար։ Պատկառելի եկեղե-
ցականը նստած էր բազմոցի մը վրայ, հա-
զիւ լուսաւորուած դահլիճի մը մէջ. իւր
բազմոցին բարձրուն վրայ ծուռ չո-
քած քանի մը եկեղեցականք զինք կը շրջա-
պատէին, երբեմն երբեմն անիւթութեամբ
կը ծխէր երկայն Կապախ մը։

Մուշտակով զարդարեալ մաշուած եւ
կարկտուած երկայն թխագոյն պատմու-
ճան մը հագած էր. կապոյտ փաթիթոց մը
իւր գլուխը կը պատէր և իւր սպիտակ եր-
կար մօրուքը, զոր կը փայտայէր հաճոյքով,
իւր ամբողջ կուրծքը կը ծածկէր։ Զմեզ
օրհնելէ յետոյ, Ն. Սրբազնութիւն Միքա-
յէլ Ն. հրամայեց որ բերեն ճաշը, զոր կրօ-
նաւորք մեզ ներկայացուցին անագէ լայն
ափսէներով։ Կաթողիկոսը ճաշի միջոցին

այցելութեանս նպատակն հարցուց եւ զիս
հրաւիրեց վաճառքին մէջ ընտելու որչափ որ
գործերս զիս պարտաւորէին հոն կենալ։

Ինձ համար անկողին մը պատրաստել
տուին Դիւանատան սրահ կոչուած մեծ սե-
նեկի մը մէջ, որոյ սպտուկահներն ամեն
հովի առջեւ բաց էին։ Իւզոտուած եւ մեզ
համար նորոգուած թուղթեր կը զարդա-
րէին սպտուկահներն եւ ապակիի տեղ կը
ծառայէին։ Մի քանի օրեր կեցայ մատենա-
դարանին ձեռագրերը քննելու եւ վաճառքին
գանձատուին այցելու համար։ Կաթողիկո-
սարանի շինուց մասը կազմող թեմական ե-
կեղեցւոյն կից սրահի մը մէջ պահպան-
ուած են Ս. Գրիգոր Լուսաւորչի, Հայաս-
տանի առաջին առաքելին, Ս. Նիկողոսի
եւ Ս. Սեղբեստրոսի աշերն եւ Բասանոյ
ճգնաւորին բազուկն։ Ամփոփուած են ար-
ծաթէ բազուկներու մէջ, որոց ցուցամատը
զարդարուած է զմրուխտով պնտուած ոսկի
մատանիով մը։ Այս չորս մասունքը խնամով
կը պահպանուին զուտ արծաթէ եւ նուրբ
քանդակներով զարդարուած մասնամանի
մը մէջ։ Ս. Գրիգորի մասունքին սեփակա-
նութիւնն է որ կը կազմէ Կաթողիկոսին
հարազատութիւնն, որ իւր տիտղոսներէն
մին րրած է Ս. Գրիգորի բազկին պահա-
պանի տիտղոսն ալ։ Գանձարանին միւս
հարստութիւնները կը կազմուին ոսկեզօծ
արծաթեայ պահպանակէ մը, որոյ մէջ կը
պահեն միւսնոն, խաչերէ, սկիւններէ, թա-
գերէ եւ արծաթապատ Աւետարաններէ։
Այդ Աւետարաններէ մին հայ գեղագրու-
թեան մէկ հրաշակերտն է. Ժ. Դարուն
մէջ Հայաստանի Կոստանդին Գ. թագա-
ւորն զայն նուիրած է Սոյ եկեղեցւոյն։

Սոյ մէջ ընտելութեանս ատեն, այցե-
լեցի հին վանքն, որ արդէն քանի մը տա-
րիէ ի վեր լքուած է եւ ուր կը գտնուին
Կաթողիկոսաց գերեզմաններն, որոց վրայի
արձանագրութիւններն արտագրեցի։ Ասոնք
սպիտակ մարմարիոնէ պարզ շիրիմներ են,
որք կը ծածկեն յատակն եկեղեցւոյն որ
այժմ դարձած է վերածուած է։

Սոյ ընտելներն են Հայք եւ Թուրք.
մէջը, որք կը հնազանդին լեռնաշղթային
մէջ ահաւոր անուն հանած լեռնաբնակ
պետի մը, որ Գօգան-օղլու ցեղին հրամա-
նատարն է։ Թէեւ յիշաւ այդ անձն է որ
բոլոր երկիրը կը կառավարէ, բայց իւր ազ-
դեցութիւնը չէ կրցած երբեք տարածուիլ
իւր ստացուածոց արեւելակողմը գտնուող
լեռներուն հայ բնակչաց վրայ։ Ռուբին-
եանց ընտանիքէն, Հայաստանի պարոննե-
րուն անկուսէն, այսինքն Ժ. Դարու վեր-
ջերէն ի վեր, հայերն, այլազգիներէն
հարստահարեալ, բաւական մեծ թուով ա-
ղաստանած են Զէյթունի (Զիթենեաց) լե-
ռանց մէջ, եւ հոն գիւղեր շինած են ուր
բոլորովին անկախ կ'ապրին։ Իրենց բնակած
երկրին վրայ է որ կը գտնուին այն անուա-
նի (այժմ լքուած) բերդերն որք կը կազ-
մէին Տօրոսի հայ թագաւորաց ոյժը։ Բարձր
բերդ, Վահկայ, Կապան ուր Լեւոն Զ.
Լուսինեան գերի բռնուեցաւ։ Նգիւտացի-
ներէն 1373ին, Մարաշ կարեւոր քաղաք
ուր կուսակալ բաշա մը կը բնակի։ Այս
բերդերուն հիւսիսակողմը կը գտնուի Հա-
ճընի¹⁾ գիւղն, ուր կը բնակին հայեր որք
Զէյթունի հայերուն պէս անկախ են։ Այդ
գիւղն որ շատ բազմամարդ է, Գարմէս-

Տաղի հարաւային մէկ առեփին վրայ գե-
տեղուած է։

Անկարելի եղաւ ինձ այդ անկախ հա-
յերով ի գաւառին մէջ յառաջանալ, ինչ-
պէս որ որոշած էի ընել, վասն զի անոնք
կը զգուշանան յանկարծակիի գալէ եւ ի-
րենց գիւղերուն մուտքը զիւրութեամբ չեն
բանար օտարաց։ Սակայն վաճառքին մէջ հե-
տաքրքրաշարժ տեղեկութիւններ քաղեցի
ասոնց քաղաքային կաղմակերպութեան,
թուոյն եւ ի հարկին հանեւ կրցած զօրացը
վրայ։

Տօրոսի Հայք, որք աւելի ստէպ Զէյ-
թունցի անուամբ կը յորջորջուին, գրեթէ
10,000ի չափ են, բայց այդ թիւն աւելի
կը բարձրանայ եթէ Ելպիսդանի, Մարաշի
եւ շրջակայ գիւղերու հայերն ալ միատեղ
համրուին։ Միայն Սոյ Կաթողիկոսին իշ-
խանութիւնը կը ճանաչեն եւ իրենց վար-
չութեան համար ժողով մ'ունին որ կը կազ-
մուի չորս աղաներէ, զորս կ'ընտրեն իրենց
գիւղերուն ամենէն ծերերուն մէջէն։

Այդ ժողովին պաշտօնն է երկրին պաշտ-
պանութիւնը, ներքին ոստիկանութիւնն և
Գօգան-Օղլուի պէյին եւ Ատանայի կուսա-
կալութեան հետ յարաբերութեանց մշա-
կուումը։ Զէյթունի բնակիչք երկրագործ են
եւ կարաւանաց կ'առաջնորդեն։ Ամենքն
ալ զէնք կը կրեն, մինչեւ իսկ երբ իրենց
Ս. Յովհաննէս եկեղեցին երթան, որ սրբա-
վայր մ'է իրենց համար, զի հրաշագործ Ա.
Էստարան մը պահպանուած է անդ։ Սոյ
մէջ ընտելութեանս ատեն, ամեն առաւօտ
Զէյթունցի սափրիչ մը կուգար վանակա-
նաց գլուխն ամիւլելու համար. նա կը կա-
տարէր այս պաշտօնն, յոտից ցգլուս զին-
եալ։ Երկու ատրճանակներ կ'ախուած էին
գօտիէն եւ արծաթէ կոթով դաշոյն մը կը
փայլէր անոնց բռններուն միջեւ։

Մօրուքի ափսէն, զոր կը բռնէր իւր
ձեռքն, իրեն կուտար Տօն Գիշօղի կեղծ
կերպարան մը, որու հետ քիչ մը նմանու-
թիւն ունէր։ Զէյթունի բնակչաց բարբերը
մաքուր այլ վայրի են։ Կը պատմեն հետեւ-
եալ դէպքն, որ այդ լեռնաբնակաց բնա-
ւորութիւնը ճշգրտապէս կը նկարագրէ։ Զէյ-
թունցի մը, լուսաւորչական եկեղեցւոյ օ-
րինաց հակառակ, իւր հօրեղբոր աղջկան
հետ ամուսնացած լինելով, բանադրուե-
ցաւ գիւղին քահանայէն։ Իւր եկեղեցւոյն
ծոցէն ինքզինք արտաքսեալ տեսնելով կատ-
ղած, առաւօտ մը ժամերգութեան գնաց,
եւ, քահանային սպասարագ մատուցանելու
համար խորանն ելած ատեն, իւր լայնա-
փող հրացանը պատրաստեց, նշան առաւ
անոր եւ աղաղակեց. «Ինձ դէմ արձակած
բանադրանքդ ե՛տ առ, ապա թէ ոչ կ'ըս-
պանեմ զքեզ»։ Բանադրանքն եկեղեցւոյն
մէջ հաւաքուած բազմութեան առջեւ ետ
առնուեցաւ, եւ վերջը ոչ ոք ամենափոքր
նեղութիւն մ'իսկ տուաւ հայուն։ Զէյթուն-
ցիք հաւանեցան իւր ընթացքին, եւ զայն
ճանաչեցին ճշմարիտ քրիստոնեայ մը եւ
քաջ պինդ մը։

Տասն օր կեցայ Սոյ Կաթողիկոսական
վանքն, ապրելով կրօնաւորաց հետ, որոց
ճաշերուն կը մասնակցէի։ Ապա հրաժեշտ
տուի Կաթողիկոսին եւ եկեղեցականներուն,
եւ, ժողովէ յետոյ ձիաւորներս, որք նա-
խորդ երեկոյէն ի վեր Սոյ խանին մէջ տե-
ղաւորուած էին, ուր մեծ քանակութեամբ
զոյի կ'սպասէին, դէպ Անապաւա ուղղուե-
ցայ, յետոյ Ճէպէլ-էլ-Նուրէն (հին Ամա-
նոսէն) անցնելու յուսով, որ Տօրոսի մէկ
ճիւղն է եւ Փոքր Ասիոյ եւ Ասորիքի սահ-
մաններն որոշելու կը ծառայէ։

Վ. ԼԱՆԳԼՈՒ Թարգմ.
ՄԻԲԱՅԷԼ Զ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

1) Հաճըն կը բաղկանայ 2000 տուն հայէ, եւ
կը պարունակէ Սոյ Կաթողիկոսէն կախում ունեցող
վանք մը եւ երեք եկեղեցիներ։

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Վարդան «Թուրք» մտկանուննեայ, ընդհանուր պարագետ Արեւելեան զօրաց եւ ապա կայսր Բիւզանդիոյ. — Հայկազն Կիւսկինստոս Պառտի-Քնալը-կղզին մէջ. — Կուրուժեւն Վարդանայ եւ ընդհանուր յուզումն ի Բիւզանդիոյ. — Արշաւիր Պատրիկ Հայկազն, գանձապետ արքունի, ապա ընտրեալ կայսր Բիւզանդիոյ. — Լեւոն Արծրունի:

ՎԱՐԴԱՆ

803ի մայիս 4ին, Նիկեփորոս Ա. Լո- ղովեալ բազմի բերումով կը յաջողի գահնե- կեց ընել Եփեսոս հռչակաւոր կայսրութիւն եւ նորա տեղն անցնել Սակայն Նիկեփորոս որ արդէն ատելի եղած էր ժողովրդեան իւր յուսն ընթացողով, նոյն տարւոյ յուլիս 19ին կ'իմանայ թէ Փոքր Ասիոյ յունական զօրաց ընդհանուր հրամանատար Վարդան Պատրիկ Հայկազն, կայսր հրատարակուե- լով Արեւելեան զօրաբանակէն, ահագին բազմութեամբ սկսած է գիւնել դէպ ի Կ. Պոլիս: Նիկեփորոս բոլորովին կը սարսափի այս լուրն իմանալով, որովհետեւ Վարդան միակ եզակեան անձն էր իւր ժամանակին Բիւզանդական կայսրութեան մէջ որ իրա-ւամբ առաջնակարգ զօրապետի համար կը վայելէր: Վարդան աղնուական ընտանիքի զաւակ էր եւ ըստ պատմագրաց կը պատկա- նէր Մամիկոնեան նշանաւոր ցեղին: Սա սիրելի եւ համակրելի եղած էր ընդհա- նուր զօրաց իւր առաքինութեանց եւ զինուորական արժեքեանց համար: այս կըր- կին նկատումներով Արեւելեան զօրքերը կը թախանձէին որ յանձն առնու կայսրու- թիւնն, որ անարժան մարդու ձեռք կը գտնուի: Սակայն Վարդան նախ շատ ընդ- գիմացաւ, որովհետեւ կրօնաւոր մը զու- չակած էր իրեն ըսելով. «Նիքէ ընդունելու լինիս կայսերական գահն, մեծամեծ դըժ- բաղդութեան պիտի ենթարկիս եւ պիտի զրկուիս արեգակի լոյսէն»: այլ երբ տեսաւ թէ ճար չկայ, պարտաւորեցաւ զինքնիւ զօրաց թախանձանքին: Ուստի կայսերա- կան շքով եւ բազմութիւն զօրքով մեկնեցաւ դէպ ի Կ. Պոլիս: Ճանապարհին ամեն ու- բեր ժողովուրդն եւ զօրքերը մեծ համակ- րութեամբ կը դիմաւորէին Հայկազն Կայ- սեր, մանաւանդ Փոլսիցիոյ եւ Բիւզանդիոյ մէջ: Նիկիովիդիայէն անցնելով, Վարդան եկաւ բանակ դրաւ Սիւլտանի հանդէպ. այդ տեղ Վարդան կը հաւատար թէ տե- ղական բնակիչները, զուգահեռ ընդա- առջ պիտի ելնեն իրեն. սակայն այդ ցոյցի բացակայութիւնը բոլորովին վատեցուց զինք եւ ինք կատարելապէս յուսախար ե- ղաւ: Մանաւանդ որ իւր զօրավարներէն երկուքը Լեւոն Հայկազն եւ Միքայէլ Բեգ, լքանելով իրենց կայսրն յարեցան Նիկեփո- րոսին Վարդան, որ բնաւ փափագ չուէր կայսրութեան եւ փառաց առհասարակ, յարմար առիթ համարեց հրաժարելու: այն նպատակէն դէպ ի որ բռնի մղուած էր իւր զօրքերէն: Սակայն զօրքերը չէին ուզեր ի- րենց կայսեր նուաստութիւնն եւ կ'ստի- պէին անպատճառ պատերազմիլ Նիկեփո- րոսի դէմ: Վարդան մոտի չընելով այլ եւ այլ առարկութեամբ զօրքերն հեռացուց Սիւլտանէն եւ զնաց Բիւթանիա Ուլմալիոս լերան մօտ, Մալազիին փոքրիկ քաղաքն: Այդ տեղ սաստկանալով մտաւանդութիւնը թէ իւր պատճառաւ բազմութիւն անմեղ արիւն պիտի թափուի, Վարդան վճռեց հրաժարիլ

իւր մտադրութենէն եւ խորհեցաւ հաշտե- լիլ Լոյսթիոսի հետ: Բայց նկատելով թէ իւր զօրքերն երբեք չպիտի հաւանէին ա- դոր, գաղտնապէս յայտնեց Նիկեփորոսի թէ ինք կը հրաժարի կայսրութենէ եթէ խոստանայ չմնասել իւր մտդոց եւ եթէ կատարեալ ներում տայ իրեն եւ իւր զօ- րաց:

Նիկեփորոս արտակարգ բերկրութիւն զգաց այս լուրն իմանալով. որովհետեւ սոսկալի երկիւղի մէջ էր միշտ Վարդանի պատճառաւ, զի շատ լաւ տեղեակ էր նո- րա փայլուն քաջագործութեանց: Նոյն ժա- մայն կազմեց իւր մտքի մէջ սոսկալի ծրա- գիր մը: Նրդուեցաւ կատարել այն ամենը զոր Վարդան պիտի խնդրէր իսկոյն պատ- րաստել տուաւ երդմնագիր մը եւ Վար- դանի միտքը բոլորովին տալահովելու հա- մար այն գիրը վաւերացուց: Տարիսիւս Պատրիարքի եւ առաջնակարգ պաշտօնէից ստորագրութեամբ եւ կնիքով Նիկեփորոս չգոհանալով այսու իւր նամակի հետ զրկեց ուրիշ անձ խտելի երաշխարութիւն մը, այն ոսկի խաչը զոր կը կրէր իւր վզին:

Վարդան մի եւ նոյն գիշեր իւր մի հա-ւատարիմ թիկնաւորի հետ գիշերանց խոյս տալով բանակէն սրարչաւ սկսան յառաջա- նալ դէպ ի Կ. Պոլիս: Հանգիստ առին Գի- ուս փոքրիկ քաղաքի մէջ որ այժմ կ'ան- ուանի Կէմէշիկ, Մուտանիոյ ծոցի մէջ պարզ նաւամատոյց մը: Այդ տեղ կը բարձրա- նար Հերակլիոսի վանքը: Վարդան, որ կ'ընթանար ի կորուստ, որպէս այլ մարդիկ կ'ընթանան դէպ ի փառքը, ժամ առաջ հրաժարելու համար այս տեղի աշխարհէս, զնաց արթնցուց վանահայրն, յայտնեց իւր անունն եւ հրամայեց իսկոյն կտրել իւր մազերն ի նշան կրօնաւորութեան: Սակայն նա վարանեցաւ, ապա յայտնապէս մերժեց զայսպէս չուտափոյթ երկնաքաղաքացի դառնալ: այն ժամանակ Վարդան քաջեց իւր սուրն եւ կտրեց իւր երկայնաձիգ զանդուր մազերն: Հանեց զինուորական զգեստը, վանահայրը չտալով նա կրօնաւո- րական վերադիւն, նա հազաւ սպասառա- տուն ողորմելի հագուստ մը. ապա իջաւ նաւամատոյց ուր կ'սպասէր իրեն Նիկեփո- րոսի զրկած մակոյղը: Մի քանի ժամ յե- տոյ Վարդանի նոստաց հռչակաւոր Յաղթականը կը մտնէր Պառտի, կղզին այն է այժմեան Քնալըն:

Վարդան իւր բազմաւորութեան ժա- մանակ այդ կղզւոյ մէջ կատուցած ունէր մի մենաստան շրջապատեալ մշակելի հողով եւ համեստ խցիկներով: Պատերազմի ա- րիւնահեղ դաշտէն վերադառնալէ յետոյ Վարդան կը սիրէր խաղաղ օրեր անցու- նել այդ կղզւոյ մէջ, ուր այդ նոր կիսկին- նատ կը մշակէր մենաստանի շրջակայ հո- ղը: Վարդան երբ այս անգամ աշխարհիս մեծագոյն փառքէն առ յաւէտ հրաժարե- լով կը մտնէր այդ կղզին, երբեք տխրալի մտածում մը չմիտքնեց իւր ճակատն. եւ երբ կրօնաւորներն այս անգամ տեսան նո- րա գալուստն ուրախութեամբ դիմաւորե- ցին զնա: տուին հոգեւորականի զգեստ- ներ եւ բնակարան, համեստ անպաճոյճ խցիկ մը: Արեւելեան այդ մեծ սպարա- պետը վերստին սկսաւ այն կեանքն զոր երբեմն երբեմն կը վարէր Պառտիի մէջ. դարձեալ կը մշակէր այն մի եւ նոյն հողն: Արշալոյսին կ'երթար երգելու առաւօտեան ժամերգութիւնը մեծ խանդով, իսկ յետոյ բաճը ձեռնի առնելով կ'երթար մշակել Քն- նալը-Ստայի քարքարուտ եւ անջրգիլ հողն:

Այնուամենայնիւ Նիկեփորոս հանգիստ չուէր: Վարդանի կրօնաւորական նա- խանձալուղութիւնը լոկ կեղծիք կը թուէր իրեն. այսպատճառաւ լաւագոյն պարագայ մը կը փնտէր սոսկալի վախճան սալու Վարդանին: Հազիւ մի քանի շաբաթ ան- ցած էր յորմէ հետէ: Արեւելեան զօրա- բանակի նախկին մեծ զօրապետը կը ճգնէր Պառտի մենաստանի մէջ, եւ ահա խաւարա- շին գիշեր մը երբ նա կը ընանար իւր խոցի մէջ, արթնցաւ մեծ աղմուկէ մը եւ շրջապատեալ գտաւ ինքզինքն զինեալ առա- զակախութիւն: Անկողնէն վեր ցատկեց այլ իսկոյն բռնուելով կապուեցաւ եւ մինչ սոս- կալի ճիշեր կ'արձակէր, Բիւզանդիոնի ժա- մանակակից Նիկեփորներէն մին. մէկ ան- թարթի մէջ նորա աչքը խրեց իւր սրա- ծայր սուրն. եւ երկու վայրկեան յետոյ կուրցած էր նա. արեան զոյգ առուակներ առատորէն կը ժայթքէին նորա ակնակա- պիչներէն: Այսպէս էր Բիւզանդիոնի մէջ հին ժամանակուան պատիժը տալուկալի մարդոց համար. սակայն Վարդանի նման անձնաւորութեան այսօրինակ պատժուիլ ամենախորին յուզումն եւ դժգոհութիւն պատճառեց յունական համայն կայսրու- թեան մէջ: Այսօրվ Կ. Պոլիս մեծ վրդով- ման մէջ էր ընդդէմ Նիկեփորոսի. այլ ա- ամենուրեք երգումով կը ջանար հաւատա- ցնել ամենուն թէ ինք անտեղեակ է այդ ոճրագործութեան եւ սոսկալի կերպիւ պի- տի պատժէ յանցաւորները, թէ եւ արդէն գաղտնապէս զնոսա պատապարած էր իւր պալատի ներքին սենեակներու մէջ: Դառ- նապէս կուլար Վարդանի համար. սակայն ոչ ոք կը հաւատար նորա այդ վշտի իրա- կանութեան:

Վարդան իւր սոսկալի վէրքէն բժշկու- ւելէ յետոյ կը դիմանար այդ կենդանի մահուան մեծագոյն արութեամբ: Իւր օրե- րը կ'անցունէր աւելի խիստ ապաշխարու- թեամբ, այնուհետեւ կը հազնէր անանոց մօրթ, ոտքերիկ էր եւ գլխաւաց ամառ եւ ձմեռ, միմիայն ջուր կը խմէր, միմիայն չոր հաց կ'ուտէր զոր ինք անձամբ կը պատրաս- տէր: Հրաժարեցաւ տեսակցելէ իւր կնոյ եւ որդւոց հետ, նոցա եւս պատուիրելով քաջուիլ մենաստաններու մէջ: Ամեն կող- մերէ հազարաւոր ուխտաւորներ կը դիմէին Քնալը կղզին այն հայկազն կայսեր մօտ, որ ճգնաւորական համեստ կեանքը վերա- գասեց կայսերական փառքէն: Հիւանդներ կը բերէին որ բժշկէ, մանուկներ կը բե- րէին որ օրհնէ: Վարդան տակաւին ընդ երկար ապրեցաւ եւ մեռաւ սրբութեամբ Լեւոն հայկազն կայսեր ժամանակ:

Նիկեփորոս իւր վատութեամբ աւելի եւս ատելի դառնալով, տէրութեան մեծա- մեծներէ շատեր միտքանեցան ու կայսր ընտրեցին Արշաւիր հայ Պատրիկն որ կայս- րութեան գանձապետն էր եւ ճանաչուած էր իւր բարեկրօն եւ իմաստուն մարդ: Սակայն Նիկեփորոս չուտով իմանալով այս գաւազդութենէ առաջ ձերբակալեց Արշա-ւիրն եւ չարաչար ծեծել տալէ յետոյ մա- ղերը կտրեց եւ աքսորեց Բիւթանիա վանքի մը մէջ կրօնաւորելու. պատուհասեց նա- նապէս եւ նորա բոլոր համախոհներն որոց մին էր Արշաւիրի փեսայ եւ Վարդի որդի Լեւոն որ Մեծ Հայոց աշխարհէն էր եւ Արծրունեաց ցեղէն: Այս Լեւոնը մեծա- հանձար եւ քաջարի մարդ մ'էր: Նիկե- փորոս գաւազանութեամբ բռնելով Լեւոն Արծրունին գանակոծեց, ապա մազերը կտրելով աքսորեց մենաստան մը:

ԱՆՈՒՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Հիկեփորասին յաջորդեց Միքայէլ Ռան-
գար, որ երկչոտ եւ թոյլ մարդ մը լինե-
լով կառավարութեան հոգն յանձնուած էր
Պոտկոսլիա թագուհւոյն։ Սակայն 815ին
Բուլղարաց զէմ մղեալ պատերազմն յառաջ
բերաւ մի նոր դիպում։ Միքայէլ Ռան-
գար արքայանքէ ետ դարձեց այն ամեն
իշխաններն, որ Վարդանի եւ Արշալիրի
պատճառաւ վտարուած էին, սոցա մէջ էր
եւ Լեւոն Արծրունի, որ իսկոյն նշանակե-
աւ ընդհանուր սպարապետ Արեւելե-
ան զօրաց։ 815ի ժամանակ Բուլղարներն
սկսան արշաւել դէպ ի Յունաստան եւ ա-
ւարի առնուլ շատ քաղաքներ ու գիւղեր։
Միքայէլ կայսրը մեծ պատրաստութեամբ
յարձակելով նոցա վրայ չարաչար յաղթուե-
ցաւ եւ միասաւ Վ. Պոլիս նոր գործ ժող-
վելու։ Եւ մինչ սա խոյս կուտար դէպ ի
Պոլիս, միւս կողմէ Արեւելեան զօրաց պետն
իմանալով պատերազմն անյաջող ելլէն, հա-
մարձակօրէն եւ վստահ իւր յաղթութեան
կը դիմէր Աղբիւնուսլիս ուր մինակ պա-
տերազմելով Բուլղարաց հետ, սոսկալի
ջորդ տուաւ նոցա եւ յաղթանակաւ վե-
րադարձաւ Բիւզանդիոն, ուր կայսրը բո-
լորովին վհատած իւր պարտութեան հա-
մար, իւր մօտ կանչել տուաւ Լեւոն Արծ-
րունին յայտնելով թէ իրեն կը յանձնէ կայ-
սերական գահն, իսկ Լեւոն մերժեց առար-
կելով, «Չեմ ընդունիր այն իշխանութիւնն,
որմէ կամովին կը հրաժարի տուողն»։ Արե-
ւելեան զօրքերն երբ իմացան թէ Լեւոն
կը մերժէ կայսերական գահը, բռնութեամբ
կայսր հաստատեցին զնա եւ նոցա մին Մի-
քայէլ Բեգ, Լեւոնի ընդդիմութեան վրայ
այրացած սուրը քաշելով գոչեց քարկու-
թեամբ։ «Եթէ չզիջանիս մեր օրոշման, այս
սուրը սրտիդ մէջ պիտի մխեմ»։ Եւ այդ
անձն, որ այս աստիճան համակիր էր Լե-
ւոնի կայսր ընտրուելուն, ապա եղաւ նո-
րա դահիճը։ Լեւոն յանձն առաւ իշխանու-
թիւնն, իսկ Միքայէլ կայսրը քաշուեցաւ
վանք մ'ուր կրօնաւոր եղաւ։

(Մարտնախէն)

Պ. Տ.

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Ա.

ՄՈՒԿՅ Երկիրն, որ իւր հնագիտական եւ
ազգային կեանքի մի աղօտ ուրուականով
կը ներկայանայ մեզ որպէս մի վեհամիտ եւ
զիւցազնական աշխարհ, կը կրէ յինքնորդ
եւս այն հին սեռիդի մնացորդն որ կը պա-
հէ տակաւին ընտանեկան եւ ազգային
կեանքի այնպիսի սովորութիւններ, որոց
նկարագիրն անժխտելի ապացոյց մը կրնայ
լինիլ այդ ժողովրդեան անցեալին։

Այս երկիրը պարսպաւորուած է Անտի-
տաւրոսի ամուր եւ անթիւ հսկայ լեռնե-
րէ կը գտնուի Վասպուրականի կուսակա-
լութեան գերիշխանութեան ներքեւ։ Օղն
եւ ջուրը խիստ անմասն են եւ առողջա-
բար։ Ձմեռը կարի ցուրտ եւ ձիւնոտ, գա-
րունն, ամառն եւ աշունն՝ երջանկաբեր ի-
րենց այլազան բարիքներով ժողովուրդն ոչ
այնքան հսկայ, որքան առողջ եւ հուժկու։

Երկիրն է յուսթի եւ արգասաբեր։ Ըն-
դարձակ դաշտերի տեղը՝ ձորեր եւ հովիտ-
ներ կը լնուեն նոցա ձմրան պաշարներն։ Ոչ-
խարաբու ծովիւնն եւ մեղուատածութիւնն
երկրի բերքերի մէջ ամենակարեւոր տեղը
կրնան բռնել, եթէ մասնաւոր ուշադրու-
թեամբ վերնան գանոնք, ոչնչացնող բնա-
կանի գոյն ստացած պատճառներն։

Այժմեան Մոկս ունի իւր նոր բաժան-
ման սահմանները, սակայն մենք չենք կար-
ծեր թէ մի միայն 8-9 ժամու մօտ, երկու-
րութիւն եւ 2-3 ժամու չափ լայնութիւն
ունեցող ներկայ գաւառակն եւեթ եղած
լինի այն աւանդական քաղաք եւ մեղքաց
հայրենիքն։

Ուղիղ հաշուով խիզանի գայմագամու-
թեան վերաբերուող հիւսիսային եւ արե-
ւելեան այն մասերն՝ որք աւելի կից են
նոյն պատմական գաւառին ու իրենց բը-
նակչաց տարազով, լեզուաւ, ընտանեկան
եւ առանձին զանազան սովորութիւններով
առաջնոյն շատ նման են, մեծ ապացոյց
մը կրնան լինել որ՝ այդ երկու գաւառակ-
ներ եւս հին ատեն իրենց անմիջական
զրացիութեամբ կեդրոնական Մոկաց վրայ
հաշուուեր են։

Սահմանք են, հիւսիսէն Ուտուներ, հա-
րաւէն Բարվարի եւ Մամուտնք գաւա-
ռակներ (Ապարանից աշխարհ), արեւմուտ-
քէն Կարճկանի եւ խիզանի գայմագամու-
թիւնը։

Հիւսիսէն հարաւ վազող երկու գլխա-
ւոր գետերը կ'ուղեկեն նորա հովիտներն
ոյք Շիրվան գաւառի մէջ միանալով՝ մէկ
բանի օժանդակաց անդամակցութեամբ կը
կազմեն Տիգրիսի մի ճիւղն։

Այժմեան Մոկսէն դուրս՝ խիզանի գայ-
մագամութեան վրայ համարուած Կարճ-
գաւառն, իւր բնատու պատկերը, կը
բովանդակէ Մոկաց կենդանագրոյն ճիշդ
նմանութիւնը։ Բարձրաբերձ եւ ձիւնա-
վայլ լեռանց երկար ու անհամար օղակաց
շարքերէն ձեւացեալ, 9-10 ժամու մօտ,
հիւսիսէն հարաւ երկայնութիւն ունեցող
լեռնաձորի մը մէջ կը գտնուի այդ գաւա-
ռակին երկու կողմէ այդ ձորամիջի աջ ու ձա-
խէն՝ կը բռնեն քսանէ աւելի հայ եւ տաս-
նի մօտ քուրդ գիւղերը։ Վերին մասը
կիսովին կը կոչուի վերին Կարկառ, ուր
կը գտնուի նաեւ համանուն քուրդ
գիւղն։ Երկրորդ մասը կը կոչուի «Ներքին
Կարկառ» որոյ մէջն է Եղեգիս 40 տնուոր
հայ գիւղն՝ որ իւր ներքին եւ արտաքին
կացութեան դժբախտութեամբ հայելի է
գոգքեւս ողջոյն գաւառի կացութեան։ Այս-
պէս այս գաւառակն իւր այս երկու բա-
ժանմամբ երկու մօտ կուսակալութեանց
— Բաղէշի եւ Վանայ — սահմանազրկուե-
րը կը գծէ, առաջինը լինելով Վանայ՝ եւ
երկրորդը Բաղէշի գերիշխանութեան են-
թակայ։

Եղեգիս գիւղէն կէս ժամ հեռի է 25
տնուոր Հարբեւնց գիւղ։ Սարգ վայելու-
թեամբ մը շինուած է Սիւէթէլ լեռան ջրանցքի
վրայ՝ ինչպէս հսկայ բարտի մը վրայ բող-
բոջած սնկան մի թաւի։ Այս գիւղի գիրքը
լեռնային տեսքն ու վայելքը դրախտային է։
Հոս բնակող ժողովուրդն եթէ կեանքի ա-
մենակարեւոր սպասանները դիւրացնող պա-
րագաների մէջ՝ փոքր ինչ ապահովութիւն
ունենայ՝ մեր նահապետական ցանկալի
կեանքի իսկ պատկերը կը կազմէ, այն պարզ,
հիւրասէր եւ անմեղ սովորութիւններով՝
զորս մեր նախահայրերէն աւանդաբար կը
պահէ։ Որքան ալ տարբեր երեւոյթներ

տակ ներկային այսօր այդ սովորոյթը, եւ
չունենան այն չպարեալ գոյներ եւ ձեւեր
զորս կը գունաւորէ եւրոպական կամօտար
նորաձեւութիւնը, սակայն բանասիրաց եւ
հետաքրքիր անձանց համար այդ սովորոյթը՝
որք իրենց նախնական դարձուածներէ տակ
կը պահեն մեր ազգային նահապետական
կեանքի նմոյշները, շատ սիրելի եւ արժե-
քեղ ինքն մը կրնան լինել։ Այն սովորոյթը
մեր գիւղացիներէ տնակաց չէն թոնիր-
ների մոխրաց մէջ թաղուած կրակների
նման թէեւ արտաքուստ փոշիացած կը
թուին, սակայն երբ փր տանտիկինը կը
բանայ նորա երեսը եւ կը զտէ զայն, նա
կ'արծարծի եւ թոնիրը կը ջերմանայ։ Այս-
պէս են նաեւ այս աւանդական պատմու-
թիւնը, երբ լուրջ բանասէր մը մաղէ գայնա՝
պիտի տեսնէ թէ ինչ թաղուն գանձեր
կան նոյն մոխրոտ եւ կոշտ սովորոյթից կոյ-
տին ներքեւ, եւ այս հնութեամբ՝ ազգա-
յին ընտանեկան կեանքին նոր եւ օգտակար
գասմը կրնայ պատրաստել փոխանակ օտար
բժաններու պէգալի արտաշնչութեան, զուտ
կամ գէշ խառն հայկական կեանքի պատ-
մութեան հիման վրայ հիմնելով հայ ընտա-
նեկան կեանքի մ'անխարդախ բարոյական
եւ ոգեւորելով զայն ազգային ներշնչմամբ։

Բ.

Հ. գիւղի բնակչաց մէջ կան երկու ըն-
տանիք, որոնք կը կազմեն այդ գիւղի լու-
սափայլ ճրագներն։ Այս ընտանեաց տանու-
տէրները ծանօթ են ինձ, եւ մինչեւ իսկ ի-
րենց նահապետական յարկի ներքեւ հիւ-
րասիրուած՝ օրերով եւ շաբաթներով գիւ-
ղական կեանքի պարզութեան եւ անմեղու-
թեան վրայ կարելի եղածին չափ գաղափար
մը կազմած եմ։ Իրենց ընտանեկան կեանքի
պարզութեամբ կը կրեն հայկական բնատու
պատկերն։ Այս ընտանիքներէն մին լինե-
լով բնիկ, ունեցած է մի այնպիսի դիրք եւ
ազդեցութիւն իւր շրջանակի մէջ՝ որն որ
յատուկ է գրեթէ մարդկային սեռի եւ
մանուսեղ շայտտանի մէջ հայ եւ իւրիւր
նեցողի մը համար։ Այսպէս էր ահա՝ Տա-
նուտէր Սիրունի տունն եւ համարաւ։ Ու-
րոշ գիւղը կը հարստակէր Տանուտէր Սի-
րունի տանն եւ բոլոր բնակիչը կաթոգին
կը յարգէին այդ տան ազնիւ տիկինն՝ որ
իւր Վարդ անուան հետ, բարեսրտութեան
եւ հիւրասիրութեան անուշ հոտով կը լը-
նուր բոլորի սրտերն ու ամենազօրաւոր
մագնիսի մը նման առ ինք կ'առաւգէր։
Վարդ տիկին այս համբաւով եւ գործով
ծանօթ էր նաեւ ամբողջ գաւառակի մէջ.
թէ հայ եւ թէ քուրդ բնակիչը պաշտելու
աստիճանի մօտ կը պատուէին զինք։

Երկրորդ ընտանիքն՝ որքան ուշ եկած
բնակած հոն, այնքան կանուխ վայելած
չէ գեռ այն համարումը՝ զոր գիւղացիք կը
մասնաւորեցնեն «համիայ կամ իշխան» մակ-
դիրով։ Մեր գիւղացիներն ալ իրենց աս-
տիճանական բաժանումներն ունին, ինչ-
պէս քաղաքական իշխանութիւնը իրենց
գասակարգութիւնը եւ Անգլիացիք իրենց
լեւաութիւնը։ Գիւղի մէջ համայնական կամ
էշխանական տիտղոսը կ'ստանայ այն ըն-
տանիքն՝ որ այն գիւղի ամենահին բնակիչ-
ներէն է, եւ հողային մեծ կալուած ունի,
կառավարութեան տարեկան առնուազն
հազար դահեկան տուրք կուտայ եւ հիւ-
րասիրութեան համար առատ սեզան եւ
չէն տուներ ունի։ Ընդհանրապէս այս հան-
գամանքներով պէտք է նկատել մեր գիւ-

ղացի «Համախոյ» կամ «Իշխան» ըստած տուններն եւ այս երեւոյթէն ենթադրել բնական եւ քաղաքական այնպիսի ուղիղ օրէնսդրութիւններ՝ ոյք մեր գիւղական կեանքի մէջն ալ ի դարձ կը գրուին այնպիսի եղանակաւ մ'որ անցեալի եւ ներկայի վրայ համեմատութիւն մ'ընելու նիւթ կը ներկայէ մեզ :

Խաչերեան Մկրտի տունն որքան սկըսած էր նորավառ ջանքի նկատ լոյս տարածել, սակայն իբր գաղթական եւ կիսահամիայ հող ունեցող, կատարեալ համալսութեան չէր բարձրացած, թէպէտ այդ տան տանուտէրն ալ իւր գովելի ձիրքերով եւ առատածեռութեամբ Տանուտէր Սիրունին երկրորդ կը համարուէր : Եւ ասոր համար ինչ ժողով կամ խորհուրդ որ լինէր գիւղին մէջ, առանց Մկրտի ներկայութեան եւ Տանուտէր Սիրունի խորհրդակցութեան գլուխ չէր ելներ :

Գ.

Իրօք շատ հետաքրքրական է նկատագիրն մեր գիւղացիների ժողովներուն, որոնք կը գումարուին եւ կը բացուին հետեւեալ ատենագրութեամբ եւ օրակարգերով :

Գիւղական ժողովների օրակարգներն են .

1. Տուրքերի հաւաքում եւ բաժանում :
2. Բէյլի (գիւղապետ) ընտրութիւն :
3. Գլխի (գիւղապետի ստորագրեալ) փոփոխութիւնն եւ վարձի սակարկութիւնը :
4. Հոգեւոր նուիրակաց հանգանակութիւն, պտղի եւ հայթայթելու խնդիրը :
5. Գարնան սկիզբներ ոչխար դուար արածելու համար՝ հովիւ, նախորդ, խաչնարած եւ վարձելու գործն : Այս խնդիրներէն դուրս դեռ կան ուրիշ այնպիսի խնդիրներ ալ, ոյք իրենց նիւթոց կարեւորութեամբ, գիւղական կեանքի վերաբերումով, արտասովոր ժողովների նիւթ կը մատակարարեն եւ են :
1. Դժբաղդութեանց խնդիրը :
2. Գիւղի մէջ պատահած գետնութիւնը :
3. Եկեղեցւոյ կամ դպրոցի խնդիրը :

ՍՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԳԻՒԴԻ

ԱԶԳԱՅՆՈՑ 1876 ՅՈՒՆԻՍ 15Ի

ԺՈՂՈՎՈՅ

ՕՐԱԿԱՐԳ

Աղխարայ նախնայն եւ իւր արտերը

Առաւօտ էր, օրացոյցի մատնանիլ ըրած զուարթ օրերի զուարթագոյն մի առաւօտ՝ երբ գեղուկ հայրերն ու մայրերն եկեղեցիէ դուրս գալով տուն կը դառնային ու կտրիճ երիտասարդք մեծ եռանդով գործի կ'սկսէին, ամեն կողմ տարօրինակ շարժում կը տրէր, ժամհար Մարտիկ տանիքէ տանիք թռչելով «Աղթամարայ նուիրակն եկած է, տանուտէրներ, գիւղապետի հիւրանոցն հաւաքուցէք, կարեւոր գործ կայ» կը պոռար : Այս էր այդ ժողովականներին ուղղութիւնը հրաւիրագրերն, ու այդ պարզ հրաւերին համապատասխանելով բոլոր տանուտէրք, տասն վայրկեան շանցած կը հաւաքուին :

Գիւղապետ Ս. հիւրանոցն ամարուան եղանակին յարմար պատշաճ ամսեւ մի պարզ կապան էր, եռայարկ եւ պարզ չէն մը՝ կերտուած նախնական ճաշակաւ, չորս գետնի վրայ փռուած էին քանի մը փաթիլի կտորներ եւ տեղական թաղիքներ (քէչէ) : անդին դրուած էին տասնի չափ կոշտ աթոռներ, կրակով լի հողէ փոքրիկ կոնք մը

եւ մի սալոր ջուր՝ այն անմահական պաղ ջրէն որ կը բղխի այն գիւղի թիկունք կաղնիզ հսկայ լեռան ստորոտէն :

Ամենէն պատուաւոր եւ նախաթոռն համարուած հարաւային կողման փռուած թաղիքի վրայ բազմած էր նուիրակ Հայր Սուրբը : Նորա աջ ու ձախ կողմերը կը շրջան մը կը բռնէին գիւղապետի ներկայութեամբ միւս ժողովականք :

Գլխի, ժամհարն եւ փոքրաւորք, սոցա հանդէպ ձեռքերնին փոքրնուն վրայ դրած անշարժ կեցեր էին : Նախ նուիրակ Հայրն իբրեւ նախագահ խօսք առնելով խօսեցաւ այսպէս . «Աստուած օրհնէ զձեզ, սիրելի ժողովուրդ, գիտէք որ ըստ ձեր բարի սովորութեան դուք պարտականուած թիւններ ունիք կատարելիք առ մեր Ս. Աթոռն : այդ պարտքերնիդ այս տարի աւելի ծանր պէտք է նկատէք երբ յայտնեմ թէ վաճառ շատ մեծ նեղութիւններ ունի : Վեհափառ Կաթողիկոսն իրեն վեհարանը կը շինէ, միաբան վարդապետները թողեր հեռացեր են : Քանի մը հազար լիրայները մէկ երկու վարդապետք գողացեր եւ վաճառ անոնց դէմ գրգռուել է : ասոր համար, Սիրելիք, ինչպէս որ վեհ. Կաթողիկոսի Առաքաւալ ալ գրուած է, ձեր գիւղի հաբէթ-ձին պաղէ, եւ մանր տուրքերը պէտք է տաք սովորական չափէն վեր : Օրհնեալ ըլլաք դուք, տուէ՛ք սրտով եւ առատութեամբ, որպէս զի չէն մնայ մեր Աթոռը (կաթողիկոսական գահը) եւ դուք մահն եւ բաժին ունենաք այն Ս. պաշտամանց մէջ՝ որը կը կատարուին հոն» : Նուիրակ Հայր Սուրբի ճառին յաջորդեց վեհափառի այն կոնդակի ընթերցում որ խմբագրուած էր այնպէս կակուղ եւ համեղ խօսքերով, ինչպէս մաքուր եւ անուշ այն իւղը զոր կը խնդրէր վեհափառը : Կոնդակին իմաստը նուիրակ Հայր Սուրբի ճառին եղբայրն էր, միայն թէ առաջնութեան աստիճանաւ՝ նա սեթեւեթ բառերով վարդապետած էր :

(Շարունակել)

Ղ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ս

Շ Ա Յ Ս Ք Ա Ս Ա Ն Լ Ր Ո Յ

Օգոստոս 22 էՆ 28

Պուլկարիոյ նոր նախարարութիւնը կազմուեցաւ հետեւեալ կերպիւ :

Պ. Սգամպուլֆ, նախարարապետ եւ նախարար ներքին գործոց :

Տր. Սգրանսքի, Արտաքին գործոց :

Պ. Սգայլուֆ, Դատական գործոց :

Պ. Նաչէվիչ, Ելեւմտից :

Պ. Ժիվլեֆ, Հանրային կրթութեան :

Գնդ. Մոդրուրֆ, պատերազմական : Անգլ. լրագիրք գոհ են պուլկարական նախարարութեան կազմութենէն, եւ կ'ըսեն թէ այս նախարարութեան զիմադրական հակումներն աւելի եւս կը դժուարացնեն Տէրութեանց միջեւ համաձայնութեան մը գոյացումը : Պուլկարիոյ գէմ գործողութեան մասին : Անգլ. լրագիրք խորհուրդ կուտան Թուրքիոյ արգիլել Էհրէնուօթ զօրավարին առաքումն, յորմէ Ռուսիա եւեթ կրնայ օգտուի :

—Սոֆիայի օսմ. նախորդ պատուիրակ Բիզա պէյ վեհ. Սուլթանին եւ Բ. Դրան մատուց ընդարձակ եւ ճարտար տեղեկագիր մը Պուլկարիոյ վիճակին վրայ, որով կը

յայտարարէ թէ խնամակալութիւնն յոյժ դժնդակ պարագայից մէջ գործեց գոյելի իմաստութեամբ ու զգուշութեամբ, եւ պատշաճ հոգածութեամբ Բ. Դրան շահուց, հակառակ անընդհատ գրգռմանց : Բիզա Պէյ կ'ըզրակացնէ թէ, օրինական վիճակ մը վերահաստատելու եւ հանդարտութիւնն ապահովելու միակ միջոցն է՝ եւրալիստութիւններ ստանալ թէ Պուլկարը յապագային պիտի յարգեն վեհ. Սուլթանի գերիշխանական իրաւունքներն եւ թոյլ տալ Պուլկարաց՝ իրենց փափաքած եղանակաւ կառավարութիւն մը կազմելու, ըստ իրենց դաշնագրական իրաւանց եւ շահուց, մերժելով ո՛ր եւ է օտար Տէրութեան գերակշիռ ազդեցութիւնն որ ի հարկէ հակառակ պիտի լինի Բ. Դրան օրինաւոր իշխանութեան եւ երկրին ճշմարիտ շահուց : Պուլկարը գիտեն եւ կարող են պաշտպանել իրենց իրաւունքներ, որ Թուրքիոյ հովանաւորութեան ներքեւ են, ինչպէս կ'ընդունին Տէրութիւնը :

—Բէշլեայէ հեռագիր մը կը հաստատէ թէ Գոսպուրկի իշխանը կ'սպասուի իւր Հունգարիոյ ազարակաց մէջ. այդ հեռագրոյն նա յետով, Ֆերաիւնան իշխանի մեկնումն ի Պուլկարիայէ, արդի պարագայից մէջ, հրաժարում մը պէտք է նկատուի :

—Բեդրապուրկէ առնուած տեղեկութիւնք գուշակել կուտան թէ Ռուսիա բուռն գործողութիւն մը չալտի ընէ ի Պուլկարիա եւ թէ պիտի շարունակէ իւր արդի աշխարհավարութիւնն՝ որ է թողուլ զի «Պուլկարներն իրենց եղով տապալուին» :

—Անգլ. Երեսփ. Ժողովոյն մէջ Սըր Հ. Հօրլանտ հաստատեց թէ Կիպրոս կղզին անցեալ տարի 109,000 անգլ. ոսկոյ յաւերճ է անգլ. կառավարութեան :

—Լոնտոնէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Էքսիդըրի (Տըվանայր) թատրոնն երեք շաբթի գիշեր բռնկեր է ներկայացման միջոցին : Թատրոնին վրատակաց տակէն հանուած գիւղիկներուն թիւն 1300 կ'անցնի, վերաւոր բաղնիքիւ են :

—Կաթիկոսի յաջորդը չալտի լինի Զօր. Չերնայեվ, Զօրն այլապէս օրոշեց : Տարեկան մեծաքանակ նոյաւորն որ ցարդ կը տրուէր Կաթիկոսի թերթին, այսուհետեւ, Զօրին հրամանաւ պիտի տրուի Մեշէրքի իշխանին հրատարակած կըաշաշէն (Բաղաբացին) անուն կիսաշաբաթական լրագրոյն, որ ամեն օր պիտի հրատարակուի, եւ պիտի լինի Զօրին նախասիրական լրագիրն : Իսկ այրիացեալն Մասալէի վեհափառն իրեն գէշ ազէկ պիտի յարատեւէ, խմբագրապետութեամբ Կաթիկոսի քարտուղարին : Պիլկարը իշխանին երէց որդի Հէյ պէրդ կ'օմն Անգլիա կ'երթայ, ամուսնանալու Իւլանայի Փոխարքայ Լոնտոնէրքի Մարքիզին աղջկան հետ :

—Հրէից հալածմանը վերստին օրուան խնդիր է Ռուսիոյ մէջ : Խօղինէ կը ծանուցուի թէ հակահրէական կոիւնք տեղի ունեցան այդ գաւառի մէջ : Բաւական մարդիկ սպաննուել եւ վիրաւորուել են, շատ տուներ, աւարի մատնուելէ յետոյ, կրակի տրուել, կամ խորտակուել են : Տեղային իշխանութիւնք միջոցներ ձեռք առնեն անկարգութեան վերջ տալու համար : Բայց մինչեւ հեռագրոյն թուականը խռովութիւնը կը շարունակէին : Օգոստոսի սկիզբն Եկատերինսկաւ ժողովուրդը, մասնաւոր ժողովրդեան հրեայ մասը, սարսափահար եղաւ, այն զրոյցներու, պատճառաւ թէ չորս տարի առաջուան անգլի

հակահրէական կռիւք պիտի կրկնուին այս օրերս :

—Ճրանակաւ լրագրութիւնն զբաղեցնող մեծ խնդիրն է այս օրերս՝ 17րդ դարաւանկին առ ի փորձ շարժման մէջ զըրուիլն : Այդ զօրաբանակը կազմող զօրքերն, որք իրենց առօրեայ արհեստական, առեւտրական կամ հողագործական աշխատութեամբք կը պարագլխին, յանկարծ գէնքի կը դիմեն, իբրեւ թէ պատերազմ հրատարակուած լինէր : Ասով կ'ուզուի ստուգել թէ ի պահանջել հարկին բանակը չուտով գէնքի տակ առնուե համար եղած կարգադրութիւնք ո՞ր աստիճան գործադրելի են ճշդիւ : Եթէ արեւելեան զօրաբանակներու վրայ ի գործ դրուէր այս փորձ, Գերմանիա իրեն գէտ ուղղեալ շարժումը կրնար նկատել զայն : Որոշուած զօրաբանակին կեդրոնն է Թուրք, եւ շրջակայ դաւառք ուստիք պիտի հաւաքուին զօրքերը, մօտ են Սպանիոյ :

Ն Ե Ր Ք Ի Ն

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ երրորդ կարգի Շէֆագադ պատուանշան շնորհել Ազն. Տիկին Նեկտար Զունդի, երրորդ կարգի Մէծիտիյէ՝ Փափագեան Վսեմ Յովհաննէս Էֆէնտի, արկղակալ Պալոյ ապահովութեան Սնտուկի եւ Սանիյէի Միւթէմայիզ աստիճան՝ Արտաքին գործոց նախարարութեան փաստաբան Գօրլեան աւետիս Էֆէնտի :

Վեհ. Սուլթանն իւր գահակալութեան տարեգարծին առթիւ Գ. կարգի Օսմանիյէ պատուանշան շնորհեց Գաւաթի Պաշայի Պ. Քիրիաթօղլուի, Լ. Թէքէի տընօրէն Պ. Սնտրէ Զիքարի եւ Գ. կարգի Մէծիտիյէ՝ Գաւաթի Պաշայի Պ. Նիքօլայիտի եւ Վուդիյրապի :

—Սալիսէի աստիճան տրուեցաւ Էնկիւրիի առեւտրական դատարանի անդամ Կիւլպէնկեան Էֆէնտի՝ որդի Յովհաննէս Էֆ. Կիւլպէնկեանի :

—Բօզիլի օսի հիւպատոս անուանեցաւ Զայեան Ստեփան Էֆէնտի :

—Մանասզըրի նորընտիր կուսակալ Խալիլ Րիֆաթ փաշա շարժում մէջ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ :

—Հանգուցեալ Պ. Քրիսթի որդին, Պ. Ճրիտիս Քրիսթ, որ կը վարէ այժմ համանուն գինագործարանը, մայրաքաղաքս եկաւ իւր յարգանքը մատուցանելու առ Վեհ. Սուլթանն :

—Երկաթուղւոյ արժէթուղթք մի քանի օրէ ի վեր հետգնեալ կը բարձրանան (մինչեւ 38 Փրանքի), իսկ Գոնսպոլտէն գրեթէ մի եւ նոյն գնոյն վրայ կեցած է : Երկաթուղւոյ սոյն բարձրացման շարժառիթն եղած է Վեց Անուղլակի տրոց Վարչութեան ըրած ծանուցումը թէ Ամութի երկաթուղիներուն միացած վերջին մասն՝ այն է 5 Փրանք՝ պիտի վճարէ յառաջիկայ Սեպտեմբերին. հետեւաբար նոյն ամսութիւններու յատկացեալ տարեկան 12,000 ոսկին պիտի յատկանայ երկաթուղեաց, որով ասոնց յատկացեալ ընդհանուր գումարը պիտի լինի փոխանակ 122,000 ոսկիի՝ 135,000 ոսկի, հետեւապէս 100ին 58ի տեղ պիտի վճարուի հաւանական հաշուով 100ին 84 կամ 86 : Ահա այս կարգադրութեան համար Երկաթուղւոյ գնեքը վրայ կը գնեն :

—Նուսուֆ Սուլթան Էֆէնտի, որ Պէ-

րուքի նաւահանգստին ու քարափին շինութեան մեծաշնորհն ստացած էր, Բարիքի մէջ ընկերութիւն մը կազմելով այդ գործն ի գլուխ հանելու համար պէտք եղած դրամադրութիւն հայթայթեք է :

—Վեհ. Սուլթանն հրամանաւ, հրահանգ զրկուած է Պրուսայի կուսակալութեան որպէս զի Էսկիշէհիբի սովեալ ժողովրդեան վիճակը քննելով տեղեկագիր մը պատրաստէ :

—Ելմտական նախարարութիւնը բանակցութեան մէջ է Օսմ. Կայս. Պանքային հետ, ի մասին օտար երկիրներ գտնուող օսմ. դեսպանաց եւ անոնց պաշտօնէից ամուսականց վճարման Զայտի է թէ այդ ամուսականք կը վճարուին Օսմ. Պանքային ձեռամբ, սակայն Պանքան վերջերս առարկելով թէ կայս. կառավարութեան իւր ունեցած պահանջք անվճար մնացած են, դադարեցուցած էր դեսպանատանց ամսականց վճարումն :

Այս դժուարութեան բարձման համար է ահա որ բանակցութիւնք կը կատարուին :

—Վեհ. Սուլթանին հրամանաւ՝ երկու հազար պարկ ալիւր զրկուեցաւ յԱտանա, սովելոց բաշխուելու համար : Այս ալիւրներ յանձնուեցան Ատանայի կուսակալ Հաճի Հասան պէյի եղբոր Ապտուլ-Մէշար Էֆէնտիի որ երեքշաբթի օրը Մէրսին ուղեւորեցաւ :

—Պէշիկթաշի մէջ Աղաւնի անուն կին մը իւր այրը թունաւորեց. բայց իրողութիւնն յայտնուելով, ոճրագործ կինը ձերբակալուեցաւ, իսկ այրը՝ Մէշի Սիմօն, ծանր վիճակի մէջ է, մարմինն ուռած :

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ազգ. Ժողովն ի նիստ գումարեցաւ այս օր (Ուրբաթ) ի Մայր Եկեղեցի, նոր Գաղ. Ժողովոյ ընտրութիւն կատարելու համար եւ յետ երեք ժամու ընթացքով ընտրութեան, 20ի դէմ 29 քուէով ընդունեց Ատենապետաց Գիւանի կողմէ պատրաստեալ ընտրելեաց երկպատիկ զեղջերի ցանկի աճողութիւնն : Իսկ ընտրութիւնը մնաց յաջորդ նստին :

—Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազան խնդրեք է իւր անունը քննել Կարնոյ առաջնորդական ընտրելեաց ցանկէն, յայտնելով թէ արդէն Ռուսմանիոյ առաջնորդ ընտրուած է ինք, որոյ համար կը բանակցի տեղւոյն ազգային իշխանութեան հետ :

Գիւմրեսեան Գեր. Հմայեակ եպիսկոպոս եւս, ինչպէս ծանուցինք, հրաժարած ինքնելով յիշեալ ընտրելութեան, Կարնոյ առաջնորդական ընտրելեաց ցանկին մէջ կը մնայ սիւայն Արթ. Ներսէս Մ. վարդապետ Արսլանեանի անունը :

—Պ. Ռաբայէլ Պատկանեան (Քամառ-Քաղիպա) չորեքշաբթի առաւօտ մեկնեցաւ մայրաքաղաքէս, Նախիջեւան վերադառնալու համար : Բազմաթիւ ականաւոր ազգայինք մինչեւ չորեքշաբթի յուզարկ գնացին մեծանուն բանաստեղծին՝ որոյ սակաւօրեայ տեսակցութիւնը քաղցր տպաւորութիւն մը կը թողու աստ եւ որ ինքն իսկ քաղց յիշատակներ կը տանի իւր հետ :

—Կրօնական Ժողովն իւր վերջին նստին մէջ նկատողութեան առաւ Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հօր մէկ տեղեկագիրն, որով կը յայտնէր թէ ինք թէեւ կ'աշխատի մէկ կողմէ իրենց հայրենիքը զրկել մայրաքաղաքս թափառող սլանդ ուխտ քահանայ-

ները, սակայն միւս կողմէ սոցա թիւը կը բազմանայ օր աւուր : Ուստի որոշեց շրջաբերական մ'ուղղել բոլոր առաջնորդաց՝ յանձնարարելով որ պատուիրեն քահանայից իրենց ժողովուրդն անխնամ չթողուլ եւ արգելուին սլանդատութեան չղիւկել, նկատելով որ մայրաքաղաքիս եկեղեցեաց մէջ չպիտի ընդունուին :

Ժողովը լսելէ յետոյ Մանիսայի Տ. Յովհաննէս քահանայի բողոքներն ի մասին իւր քանակութեան եւ քահանայագործութեան պաշտօնէ դադարման, որոշեց յանձնարել Գեր. Փոխանորդ Հօր որ ի միջոցառութիւն Տ. Յովհաննէս քահանայի՝ թոյլ տրուի նմա մայրաքաղաքիս կարեւոր թաղերու եկեղեցեաց մէջ պատարագել, ցորեան մնայ ի Կ. Պոլիս :

Նկատելով որ Ամասիոյ վիճակը բոլորովին անհովիւ մնացած է, որոշեց յանձնարարել Բզնունի Տ. Մամբրէ վարդապետին, որ անդ կը գտնուի, վարել տեղւոյն ընթացիկ գործերը ցընտրութիւն առաջնորդական տեղապահին :

—Ամեն. Խրիմեան Սրբազան, ըստ խնդրանաց Գատըղլուի Թաղ. Խորհրդոյ, յառաջիկայ կիրակի հանդիսաւոր պատարագ եւ պաշտօն պիտի մատուցանէ նոյն թաղի եկեղեցւոյն մէջ ի հանգիստ հոգւոյ բարեյալատակ Օտեան Էֆէնտիի :

—Վերջերս յանձնարարուած էր մայրաքաղաքիս աւագերիցանց եւ քահանայից որ ապօրինի կենօք ապրող արանց եւ կանանց ցուցակը պատրաստելով յղեն ի Պատրիարքարան : Արդ, սոյն ցանկերն ամբողջովին հասած լինելով, Կրօնական Ժողովն յանձնաժողով մը կազմեց պաշտօն տալով նմա այդ ցանկերն ուսումնասիրել, ի հարկին կարելի եղած տնօրինութիւններն ընել եւ տեղեկագրել :

—Ճշգրտելով մէջ կը կարդանք.

Հայէպի կուսակալութիւնը խնդրած էր Բ. Դանէն որ օգնութիւնը լինին Զէյթունի հրկիզելոց : Արդ, Բարձր. Մեծ-Նպարքոսն հեռագրաւ սոյն կուսակալութեան հաղորդած է Վեհ. Սուլթանի մէկ իրատէն, որ կը հրամայէ մէկ ամսուան ապրուստի բաւականացող արմտիք գնել եւ բաշխել կարօտ հրկիզելոց : Այս հեռագիր Զէյթունի տեղական կառավարութեան հաղորդուած է ի գործադրութիւն :

—Անգլիոյ դեսպանուհին՝ որ մայրաքաղաքս հասնելէն ի վեր իւր մասնաւոր հոգածութեան առարկայ ըրած է աղքատ ու թշուառ դասն եւ որ փոյթեանդն կը դիմէ հոն ուր թշուառութիւն մը կայ ի դարմանել, չորեքշաբթի օրն՝ ընկերակցութեամբ Տր. Աղեքսանդրեանցի՝ այցելեց Սէլիմիյէի զօրանոցն ուր պատասխարուած կը մնան ցարդ Իւսիլիտարի հրկիզելոց մէկ մասը : Լէտի Հուսայէ մէկ ժամէն աւելի պտըտեցաւ զօրանոցին մէջ, մանրակրկիտ կերպիւ աչքէ անցունելով բոլոր սենեակներն, եւ հիացաւ անդ տիրող մաքրութեան եւ կանոնաւորութեան վրայ : Դեսպանուհին զարմանք յայտնեց մանաւանդ այն ընդոճին պարկեշտութեան վրայ որ կ'արգելու այդ թշուառ մարդոց մուրալ : Լէտի Հուսայէ մասնաւորապէս արգահատեցաւ մանկանց վրայ, եւ անոնցմէ ոմանց համակրական խօսքեր ուղղեց : Մեկնման առնել, Տիկին դեսպանուհին խնդրեց Տիկին Աղեքսանդրեանցէ յառաջիկայ երկուշաբթի Թատարապայի դեսպանատունն երթալ, ուր պէտք եղած միջոցները պիտի կարգադրուին, ի նպաստ հրկիզելոց :

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅՈՒՋՆԱՐԱՐԵՆՔ. ՀԵՏԵԻՆԵԱՆ ՀՈՏԱԻՏ ԵՒԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար. Ambrosial cream, օճառուտ համար. Crème de Fraises մորթեղակուղցնելու համար. Poudre de Cypres զովացնելու եւ ճերմկցնելու համար մորթի. Stilboïdeփայլ տալու համար մազերուն եւ մորուն. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակոսյներու համար. Eau de Chypre արդուզարդի համար. Քաշկինակի համար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine.

977

10—26

ԿԱԼԶԻԻ ՄԻՋՍՏԱՍՊԱՆ ՓՈՇԻՆ

ԱՄԵՆԱՋԴՈՒԻ ԴԵՂ ՍԻՆ ՄԼԵԿՆԵՐՈՒ, ԼՈՒԵՐՈՒ, ՈՋԻՆԵՐՈՒ, ՃԱՆՃԵՐՈՒ, ՄԺԵՂՆԵՐՈՒ, ՄՐՋԻՆՆԵՐՈՒ, ԹՐԹՈՒՐՆԵՐՈՒ, ՇՈՐԵՆԻ ՈՐԴԵՐՈՒ ԵՆ ԴԷՄ:

Քիւօն կը ծախուի 12 Փրանք. թըղթատարութեան միջոցաւ, 100 կրամն 1.95 Փր. է—Դիմելու է առ Լ. ԿՂԶԻ, 71, Կուռ տ'էրոյոնովի, Լիոն:

Արեւելից համար ներկայացուցիչն է Դեզադործական Մթերանոցն, Ղալաթիոյ Մեծ Փողոց, 55, Կ. Պոլիս:

796

10—10

ՕՐԱՅՈՅՑ

1888

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿԶԵԱՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Գին 40 փարա

Մասնաւոր վաճառատեղին է գրավաճառ Յովսէփ Էֆ. Դավաթեանի գրատունը, Կ. Պոլիս, Չաքմաքըլար-Եօքուչու, թիւ 20:

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐԲ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԵՐՈՒԱՆԴ Կ. ԳԱՐԹԱԼԼԵԱՆ

Դասաւոր

Չափական գիտութեանց

Ազգային դասատուներէն երուանդ էֆ. Կ. Դարթալեանի սոյն դասագիրքն, որ կը պարունակէ թուարանութեան տեսական եւ գործնական մասը միանգամայն, բազմամեայ փորձառութեան եւ մեծ խնամօք արդիւնք է:

Թուարանութեան բոլոր կանոնք կոկիկ եւ դիւրամբնելի ոճով բացատրուած են, եւ մեղրական, շահու եւ վաճառականական հաշուց վերաբերեալ կանոնք ընդարձակ տեղ մը կը գրուեն սոյն նոր դասագիրքին մէջ:

Բաց աստի, մասնաւոր ուշադրութիւն եղած է որ իւրաքանչիւր կանոնի յարակից խնդիրք թուրքիոյ առեւտրական գործառնութեանց եւ առտնին կենաց պիտոյից համաձայն ըլլան, առանց որոյ թուարանակա խնդիրք շատ անգամ տաղտկացուցիչ եւ աւելորդ կ'ըլլան:

Հմուտ թուարանին սոյն աշխատասիրութիւնը մեր ազգ. վարժարանաց մէկ զգալի պէտքը կուգայ յրացնել եւ բառնալ աշակերտաց ձեռքէն աւանդական դրութեամբ պատրաստուած շատ մը դասագրեանք:

Կը գտնուի ամէն գրաւաճառաց քով, կեդրոնատեղին է Յակոբեան խան, թիւ 14, Եւրոպական գրատուն, Ա. Պիպեռճեանի քով:

Գինն է 10 շրուշ

Շատ առնողին մասնաւոր զեղչ կ'ըլլուի:

886

25—50

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Ղալաթիա, Վոյվոտայի պալատականոցին դէմ

Արեւելեան ճաշարանն՝ որ Ղալաթիոյ բոլոր ճաշարանաց բաղդատմամբ զեղչեալ գներ որոշած էր իւր կերակրոց, իւր մեծարդոյ յաճախորդաց աւելի եւս դիւրութիւն մ'ընծայելու նպատակաւ ընդհանուր կերակրոց գնոյն վրայ նոր զեղչ մ'ալ ըրած է ներկայ ամիսն եղանակին մէջ, Սյա առթիւ կը ծանուցուի արդոյ հասա-

րակութեան թէ Արեւելեան ճաշարանն յաճախող Պատ. անձինք՝ հակառակ գնոց աժանութեան, մեծապէս դոհ պիտի մնան, որպէս միշտ, կերակրոց յաճախութեանն եւ ընտրութեանն, ճաշարանին մաքրութեանն եւ սպասարկութեանն կանոնաւորութեանն. Փափաքողաց տուններն ալ ճաշ կը զրկուի, դոհացուցիչ պայմաններով:

Վասն Սրտօնատեառն Տնօրէն-Պատասխանատու

Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԷ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ

ՄԼՏԵՍՍ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՒ ԽԵՐՇԵՐՈՒՆՈՐԻ ՄԼՁ. ՆՈՐՈՂՈՂԻ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)



Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անօրկեանքը, դժբ. եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը անկեղծ թ կ'ընէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

“Մէկ շիշ կը բաւէ:” Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմոխրագունած մազերը իրենց բնական գոյնին դարձան, եւ ճաղատ տեղերը մաքուր ծածկուեցան:

Կ'երկ չէ, եւ ամենեւին դեան մը չընէ: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր պիլի Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ Զամալ խաբէական Խալէ Նորոգողն:

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոս Եօքը: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ լուղագործներու եւ անգղիացի գեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական մթերանոց, Եիւքսէք Գալտըրըմ. եւ Իգիտոր Լագանտէլա 455, Բերա Մեծ փողոց:

ՀԵՐՄԵՆԵԿԸՆ ՆՈՒՆԿԵՓՈՒՆԵՐ

ԳԵՂԵՑԿԱՅՈՒՆՈՂ ՄԼՐՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ ՆՈՒՆԿԵՓՈՒԹ, ՄԻՇՏ ԹԵՐՄ:



Ընգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանութներ եւ բազմաթիւ փոշիներ: Ընգին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խկոյն որ երեքը, վիզը, թեւերը եւ ձեռքի ընկերը պիտի առնուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի փայլ, հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի եւ ձեռքի ցանկերը, արեւայրուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բծաւորութիւն: Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոս Եօքը: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ լուղագործներու եւ անգղիացի գեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան. Անգլիական մթերանոց, Եիւքսէք Գալտըրըմ. եւ Իգիտոր Լագանտէլա 455, Բերա մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԻՂ ՄԱՋԵՐՈՒ:

ՄԻՇԼՐՈՂ

ՄԼՁԵՐՈՒ ՄԻՆ ՀԵՏԻ ՆՈՐՈՂՈՂ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմկած կամ գունաթափ մազերը. Կը դարբեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիոս Եօքը:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Բարուան, Անգլիական մթերանոց, Եիւքսէք Գալտըրըմ. եւ Իգիտոր Լագանտէլա 455, Բերա Մեծ փողոց: